

**ՆՎԻՐՎՈՒՄ Է ՆԻԿՈՂԱՅՈՍ ՍԱՐԱՖՅԱՆԻ  
ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ**

**ԱՐԹՈՒՐ ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ**

## **ՄՏԱՆՈՒՄՆԵՐ ՆԻԿՈՂԱՅՈՍ ՍԱՐԱՖՅԱՆԻ «ՏԵՂԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱԿԲՆԹԱՑՈՒԹԻՒՆ» ԳՐքԻ ՄԱՍԻՆ**

ԵՐԿՐՈՔՆԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ.

ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԺԱՆԱՊԱՐՀԸ

30-ական թվականների սփյուռքյան իրականությունը ընդհանրապես կարելի է համարել տագնապ ապրող անհատի (բնականաբար և որպես այդպիսին՝ տակավին չնապարակած կամ ձևավորում գտնվող հասարակության) կամ, որ տեղին է ասել՝ հայ հավաքականության հոգեվիճակի բոնկումների շիկացման ժամանակաշրջան: Այս, ինչ իր թանձրացյալ դրսնորումն ունեցավ Ն. Սարաֆյանի այս շրջանի ստեղծագործության մեջ, ի մասնավորի՝ 1939 թ. հրատարակված «Տեղատուութիւն և մակընթացութիւն» ժողովածում սկզբնաբար իսկ դժվար ըմբռնելի էր, եթե չասենք՝ անհասկանալիության աստիճան անընդունելի շատերի, հատկապես արևմտահայ իրականության հոգեբանական զգայնությունը տակավին շթորափած սերմնի կողմից:

«Սփիփոք եւ իր գրականութիւնը» հոդվածում, իրապես կարևորելով, որ գրականությունը տևապես ազգապահպանումի համար մեծ և կարևոր դերակատարություն է ունեցել, ինչ որ անժխտելի է, Սարաֆյանը արձանագրում է. «Մեր գրականութիւնը ծառայեց մեր ազգային ինքնազիտակցութեան զարթումին, եղաւ մաքառման և պայքարի գրականութիւն մը: Աս է դարձեալ որ պիտի կատարէ մեծ դեր մը Սփիփոքին մէջ»: Ո՞րն է այս դերը և ի՞նչ դերակատարություն ունի անհատը (մտավորականը): Արդյո՞ք չափազանցորեն չի վերագրյալ ծանրաբեռնվածությունը «տրված» անհատին, եթե շերտավորված հասարակության (ամենատարբեր գիտակցում ունեցող և պահանջմունքներ ներկայացնող) դեմ հանդիման, ինքն է մշտապես միապակ՝ ընդունելություն գտնելու տագնապն ապրելով:

«Սարաֆեանական աշխարհի հիմնական ստորոգելին կազմող ԳՈՅԱՍՏԵՂ-ԾԱԿԱՆ (ընդգծումն իմն է, Ա.Ա.) եզրը» էապես զգալի զարկերակային նշանակություն ունի. «Տեղատուութիւն և մակընթացութիւն» ժողովածուի համանուն երկարաշում բանաստեղծապատումում:

Չափազանց դժվարությամբ, եթե չասենք՝ ճիգերի գերագույն լարումով է անհատն իրականությունն ընկալում իր բազմադեմությամբ, ունենալով տագնապն

օտարվածության: Իրեն օտար զգալու անհաղթահարելիությունից հոգմատանց, բայց ոչ մևապառ, ապավիճում է միայն հոգուն, որի դիմադրողությունակ լինելու շնորհիվ անցյալի հարուցած ամենայն դաժանն ու սահմովելին դիմազուրկ են լինում, քանզի «ճամբան փիմիկ՝ մեր առջեւ, կեանքի բացուր լայն վանդակ»:

Կյանք, որ «անսպառ դուրս կը սահի»: Կյանք, որը կարծես թե վերուստ է անհարազատության ԵՐԱՆԳԱՎՈՐՈՒՄ ունեցել: Համեմայն նեպս, օտարության առթած ցավն է ամենից տագնապահարությունը: Այն, ինչ անհատի և իրականության միջև անջրպետի (հավաքականության համար անցանկալի, եթե ոչ՝ վտանգահղի) դեր է կատարում: Թե այդ «երրը» որքանո՞վ է շրջանցելի-հաղթահարելի, որ ոչ այնքան ժամանակի, որքան անհատի վերապահի վիճակի «ճշգրտման» խնդիր է: Կամ այլ բառով՝ ինքնազնությունից: Այսպես շարունակարար է ընթանալու նրա ուղին, մինչև ինքնայի անհատի կողմնորոշումը: Հավաքականության առումով՝ մինչև վերագտած ինքնության «յուրացումը»: Մինչ այդ՝ առավել խնդրական է այն միջավայրն իր բազմաբովանակ ընդգրկումներով, որը անհատը և հասարակությունը անշնուել են Ազգային-հոգեքանական նոր դրսւորումներով անքացահայտ, իրականության հրամցրած «խաղի կանոններին». ըստ այդմ. «Ի՞նչ եմ ես որ ծնայ քանի մը լեզուի մէջ եւ անոնցմ ոչ մէկը կրցայ հարազատ նկատել և ոչ ալ մայրենի լեզու՝ որում վերադարձայ օտար դպրոցի մը մէջ օտարանալէ յետոյ»<sup>1</sup>:

Ծարժման («Ծարժում, հոտսմ ու փլուզում, հսկայաթօք, լայնօրէն») այն ընթացքը, որ պայմանավորում է անհատի անցնելիք «ճամբաներն անվախման», ինքնին պոտեկտ է առաջ բերում «տենչերու շղթայազերծ»: Եվ ինչպես Սարաֆյանի ողջ ստեղծագործության ընդհանրապատկերում, այնպես էլ այս շրջանում, ԾԱՐԺՈՒՄ ու ընթացություն ապրող, հետևապես ՈՐՈՇՈՒՄԻ, ԳՑՆՈՒՄԻ անհրաժեշտությունը չափազանց առաջնային համարող և անհրաժեշտող անհատը, նաև ճամփորդ է. («ճամբորդութեան ու անոր գաղտնի կշոռյթը»):

Որտեղից է սկսվում, ելման ի՞նչ վիճակ է անխասահմանված ճամփորդի համար՝ սկսելու և ավարտելու այն ընթացքը, որ ճամփորդության «ընդվզումով կը ճշար»: Իրականում ո՞վ է ճամփորդ՝ անհատի այն տիպարը, որ արդեն «ոչ մէկ իտեալ ու անուրջ» ուներ (աքսորումի գիտակցումն մանկությունից ի վեր զգացած), թե՞ («օրերով վազք հրատապ, ապարած պողեկուն հոգով, դարաւոր շունչ մը վրան») և արգելված ճամփաներ շնանաշող, ավելին՝ դրանք արդեն շրջանցած անհատը: Երշանկություն է ունենալ գիտակցումն այն քանի, որ «զոհաբերում մ'եղայ»: Սարաֆյանական՝ խստ անհատականացված այս գիտակցումը ծնունդ է ազգային զգայականության խորաշերտ ընկալման: Եթե վերիշենք մեկ ալ առիթով Սարաֆյանի պողեկումը. «Զոհորդութիւն մըն է հայ ըլլալը»: Այն կրկնակ իմաստ-շերտավորում ունենալուց գաւ ({ինքնության գոյարանական ընթացք-պալքարը՝ անցյալ և ներկա հարթություններում}), նաև խնդրական է օրվա (սկիուոքյան իրա-

<sup>1</sup> Ն. Սարաֆեամ, «Վէմսէմի ամտառը», Փարիզ, 1988 թ., էջ 466:

կանության) տեսակետից, ուրեմն և անհատի կողմից անմիջնորդաբար «իրազործվող»:

Զոհաբերության պատրաստ անհատի ընկալումներն սովորական իսկ պայման-անորում ենթադրում են հասարակության «ունեցած» ոչ բավարար քանակի «արյան» պաշարի և կամ օրեւ օր զգացնել տվող կենսունակ (ժառանգորդություն ապահովող) արյան մակարդման: Այդպիսով անհրաժեշտություն է առաջանում վերաթափման, վերագրթման.

**Զարթներ է ուժ մը կրկին.**

Վարդն իսկ քնքոյշ, վարդն իսկ հեզ, իր փրկութեանը համար

Ումի իր փուշը, որ մեզ

Ցանկարծակի կը խոցէ:

Եվ շուտափույթ «ծառերն...նոր ձեռ, նոր կեանք մը կ'առնեն»: Փոխաբերությունը, իբրև այդպիսին, իր գուտ խորքային և ճանաչողական (գրողական մեկնաբանումի) իմաստով Սարաֆյանի ստեղծագործության մեջ յուրահատուկ առանցքային նշանակություն ունի: Հատկապես ծառերի փոխաբերական (ընդույն իմաստով՝ այլաբերական) «կերպարային» պատկերումներն են որոշակի, կարևորվող «ներկայություն» Սարաֆյանի համար: «Ծառերն ի վար կը հոսի կայտառ ժպիտը լոյսին», «Արիւն ու միս, ու ծառեր պիտի դառնան կարծ վեմ», «Ծառը ծովին պէս, երազ, կը հիսէր քոյ մը սարսոուն», «Ու միջատները նըման ծառէն առկաի քնարներու...» եւ այլն:

Ծառերի լինելության սարաֆյանական համակարգը բացառապես և միայն «ենթակա» է անցյալի և իրականության փոխներիյուտության, անբաժան սերտաճման-ծության ըմբռնումին, նոր կեցությանը (հարատևության իմաստով): Հիրավի, գրողի կողմից կերպարավորվող և վերջապես Վենսենի անտառի խորհուրդ-կերպարով արդեն ընդհանրացյալ:

Այնքան լայնընդգրկուն է Սարաֆյանի «հաղորդակցական դաշտը», որ իր մեջ ներառելով «ծառերի» ամենանրին զգայարանքները, կարողանում է մենախոսել և մենախոսեցնել, ի դերև համելով չափազանց դրամատիկ-մարդկային նկարագիր, ավելին, սահարթերի զուության միջից անհատի (հայի) ապրած ճակատագիր է երբեմն հառնում: «Ու կան հէքեաթ պատմող ծառեր: Կան այդ հէքեաթը ապրող մանուկներ: Պատմական ճակատամարտեր մղող բանակներ են երբեմն ծառերը, սուր սուրի դէմ, ձիերու ու սահաւարտներու բաշերը հովիմ՝ ծիացող դրոշներու ներքեւ: Ու կան տաղասաց ծառեր, շարական երգողներ, բուրուառ ու ծնծղայ շարժող քահանաներ, գողթան երգիչներ ու իշխանի սպասող սոսիներ: Կան քերթողներ և լեղափոխական ներուներ: Զարդուող և աքսորուող ժողովուրդ մըն են երբեմն ծառերը, երբ ամրան կայծակները կը շողան անոնց վրայ: ...կան սերով տառապող ծառեր: Ու երկու սրունքներուն միշեն երկինքը սեղմող ծառեր»<sup>2</sup>:

<sup>2</sup> Նոյն տեղում, էջ 15:

Ապրելու ոգին, որ «կը մղէ վայերքներում...», նոր հայտնությամ և խոյաճի իմաստավորում է ստանում, քանի որ մինչ այդ («քո մանկութիւնդ եղաւ տիմարութիւն մը ամբողջ») անզրությունն ու խարիսափումն են «զարմուել իրարու»: Համար ու փոթորկուն է եղել. «Օ՛, այս պայքարն անցեալիս եւ ներկայիս միշտ իմ»: Բայց ոչ Վիատալից-իրականության բազմերակության ՄԱԾՅ երակի տրուիլունն զգացողն անմիջանորդ է արձագանքում դառնալով առավել փոթորկուն, զգայացունց. «Կը ճգմըսոի, կը զարնէ, կը զարնէ սիրտը, կ'այրին քունքերս յոգնած...»: Միակ փոփոխումն («փոփոխումն այս կրկին») իր բնույթով անձնային-իրավիճակային լինելուց զատ, նաև հասարակական-հոգեբանականի միտումներ է իր մեջ ներառում և «տեղի է ունենում» «մտքի զարթում մը քիչ-քիչ». բայց մինչ այդ երկվություն ապրողի (տագնապի երկվություն) հոգեվիճակների ընդույչալ հորդանումամբ: «Տեղի է ունենում» վաղուց սպասելին, որի դեմ անզոր է նույնիսկ որոշապես «տիրապետուած երկութիւնը»...

Որոնումը՝ շարունակականորեն է պարտադիր ու նաև զգայելի «անարգել մակընթացումի» պարագային, մանավանդ, երբ նպատակային է որոնումը՝ ինքնորոնումի փոխակերպություն պայմանավորող: Ասել է, թէ՝ «տարածութիւն է՝ որուն շունչէն իմ կուրծքս կ'ուիի»: Այն տարածությունը, որ տակավին դատարկ է, կարու՞ հոգևորի շնչառությամբ, գորովով ընդույշման: Հոգևորի, որ նախապայմանավորելու է ին-Քննութեամ, ընթացքը, մեծ հաշվով՝ ճանապարհը: Արավասիկ, անհատի զոհաբերման (ճամփորդության) իմաստը, որ սիյուռքյան գոյավիճակի թամարացյալ պատկերումն է նաև:

«Սփիտքեան կացութիւն մը ամբողջովին ապրելու համար, աքսոր ապրելու համար՝ քաժանումը անհրաժեշտ է: Բաժանումը կը մտածուի այստեղ իբրև «մեծություն» մը կերտելու համար, անհրաժեշտը ծնկու համար: Բայց հեռանալը դժուար է, որովհետեւ հեռացողը մինակ է միշտ և չունի զինք հիմնող օրէնք: Հեռացողը ինքն է, որ պիտի հիմնէ այդ օրէնքը... Դժուարը Սփիտքը ստանձնելն է, իր ամրող քարդութեամբ»<sup>3</sup>: Իրականությունը սիյուռքյան այնքան տեսանելի չէ, որքան զգայի: Արտաքրուած այն մի այնային հոգեբանական միշավայր է, ուր ապրելն ու արարելը ի խնդիր ոգու ինքնակերպության պահպանման չափազանց դժվարին, եթեն չասենք անհրագործելի է:

«Ամրող քարդութեամբ» Սիյուռքի գիտակցման-ընկալման ՀՐԱՄԱԹԱԿԱՆԸ՝ Սփիտքով ԱՊՐԵԼՆ է, ինչ որ նշանակում է նախ ապրեցնել ՈԳԻՆ, «Ոչ մէկ հմայք ու խորհուրդ... ատազին պէս ընդունեց մարմինս ամբողջ»: Ասել է, թէ կլանող օտար իրականության մեջ Դամոկլյան սրի պէս կախված ուժացումի վտանգի առջև պայքարի (իմա՝ գոյապայքարի) միջոց հայ հավաքականության համար մշտաբար եղել է հայ հոգու և մտքի շուրջ համախումբ ապրելն՝ իր ամենատարեր (դարավոր) դրսերումներով: Սրան նախորդում է լույսայն ինքնապայքարի այն ըն-

<sup>3</sup> Գր. Պըտեան, «Տրամ», էջ 369:

թացքը, կամ ազգագիտակցման կազմավորումը, երբ ցնցումն համընդհանրական բնույթ է կրում:

Արևմտյան Սփյուռքի իրականության պայմաններում ավելի քան արծարծելի է անհատի մենակության (ազգային որոշակի պատկանելիություն ունեցող՝ ընդհանրապես) խնդիրը, ո՞չ հասարակությունից մեկուսի ապրողի, այլ ինքնազգիտակից, ազգային արյան շրջանառությունն իր երակներում զգացող անհատի, որի համար մշտաբար գոյություն ունի մի տեսակ ինքնապահովման բնազդ՝ իր և սերունդների ազգային ինքնության պահպանման գիտակցությունն ապահովող: Հետևապես, ցնցման անխուսափելիություն պայմանավորող:

«Իոները գաղտնի՝ տեսմի, ապրիլի» մտահոգությամբ ապրողի համար իրականությունը և մարդկային ոչ սուկական (այլ հոգեբանորեն տարողունակ և ալեկոնձ) բնույթը ճանաչելու ճանապարհով, իրականությունն առավել դիտումնալից է դառնում: Առավել կյանքային զգայնականության ենթաշերտեր պարունակող: Եվ քանի որ Սարաֆյանի գրողական կերպը նկալումն ու լեզվական արտահայտչագեղությունը (այն, ինչ բնորոշ է նրա ստեղծագործության ընդհանրապես), կամ այլ բառով ասած՝ Ըկարչագեղ-պատկերավոր լեզուն ավելի լիարյուն են դրսերում ժամանակն ու իրականությունն իրենց կենսադիրներով և հարաշարժությամբ, տեղին է վկայաբերել այդ նույն գոյապիճակակիր մեկ այլ մեծանուն գործի մտածումները: Միայն հզորապես արմատակալած (արտաշխարհում) բազմադարյա փորձառություն կրողի արյան բանականություն պետք է ունենալ այսպիսի ինքնադրանորման հասնելու համար: Վերատին Աշենք, որ Արշիլ Գորկին նույնպես ցնցում ապրած և ցնցում ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆԲ ստեղծագործած սակավաթիվ հայազգի մոտավորականներից էր. ...ի՞նչ իմաստ ունի խրուել իրականութեան ճամիճը: Արուեստն աւելին է, քան սոսկ վաւերագրականութիւնը: Այն պէտք է արտացոլի բանականութիւնն ու զգացումները: Ոչ թէ տեսողական դիտումները, այլ մտքի անսահման փայլատակումներն են, որ բացում են ճշմարտութեան դուտը: Նրան (Ըկարչին՝ լայն իմաստով արվեստագետնին, Ա.Ա.) է Վերապահուած կոելու նոր մետաղը, վերածնելու իր դարաւոր կոչումը, որպէս մեկնիչ, բայց ոչ երբեք կեանքի գաղտնիքներն արձանագրող. հայկական իմ փորձը գիտակցականութիւնն հասցեր է զգացունքի աւելի բարձր գգայնութեան: Ինձ ԲԱՃԱՑԱՑՑԵԼՈՎ (ընդգծումը իմ է՝ Ա.Ա.), ես օգնում եմ մարդկանց ինքնաբացայատմանը»<sup>4</sup>:

Ավելի պարզորշ և միևնույն ժամանակ բարձր իմացականությամբ պատկերել դեպի իրականություն տանող ճանապարհը, որ «ճշմարտութեան դուտն» բացել է նաև (արհավասիկ՝ ցմցման ևս մեկ ապացուց, որ արդյունք է ազգային ՈՍՄՍԱՆ): Չնայած և Արշիլ Գորկու, և Սարաֆյանի պարագային Ակատենք, որ ցնցումը (կամ ինչպես մեկ այլ առումով Գ. Պըլտյանն է Աշում՝ Սարաֆյանի աքսորը) չունեն միայն և սոսկ ազգային ՀԵՆՔ: Իրապես, աքսորն, իբրև համընդհանրական գոյապիճակ, սկսել է տակավին 1915 թվականից առաջ: Եվ հաջորդ տարիներն էին, որ պիտի վերապրելի դարձնենին երևույթի ողջ առաձգականությունն ու դրա

<sup>4</sup> Ա. Գորկի, «Նամակամի» (ամգլերեն), Նյու Յորք, 1970 թ., էջ 199 (ամտիպ):

զգայնական նշանակությունը (աքսորիալի հոգեցումց կյանքը՝ «անձէն ներս և անձէն դուրս»): Իրականությունը ոչ ալեքան իմաստավորողի, որքամ՝ իմաստագերծողի (ոչ մերժողի), այլ նորա թաքրուն ծալքերն հայտնաբերողի պահանջն էր խնդրահարուց:

Ցնցման առջած զգայնությունը երբեմն նաև թախծության տեսիք է տալիս, բայց ոչ կորուստների ի գին, այլ սթափեցուցիչ, հավատընծա՝ առ «կապոյտն արգաւանդ», որ հոգենանուցման արտահայտապատկերի նշանակություն է ստանում, հոգեկան կորովի դրսերման «ընդգրումներով».

### ՏՐԻՄՈՒԹԻՒՆԸ ՍՊԱՀՆԱՃԻ

Պէս կաշկանդող երեկ զիս ու տագնապն էր տակաւին

Այս առաւօտ: Ծոեցի

Ամա զըլուխս համերաշխ խոնարհութեամբ. բարձրացայ,

Վըստահութիւնը եկաւ

Ու Ֆիրոշ շունչն ողողեց զիս, գերագոյն իբր ընծայ:

Սակայն ամենին չի ենթադրվում, որ մինչ վերին շաշառություններով հաղորդվելը, անհատը ինքնասպան անդիմությամբ էր ապրում և միայն պահի լուսեղենության շնորհն էր փրկարեր. այստեղ նույնական եկատելի է տագնապ ապրած, այնունետև վերապահության-ցնցման ենթարկվածի վրա որոշակի մերգործություն, ինչ որ տեղ նաև ինքնաճաշման-ինքնացնցման հետևանք լինելով: Վերստին առարկայական է դառնում հոգեկորովի խնդիրը: Քանզի անհուսությունն ու կամագրկությունը չէին կարող նման արտահայտումներ ունենալ՝ ոգու դատապարտվածությամբ տառապողի համար:

Ն. Սարաֆյանի բանաստեղծության պարագային, գոյի, լուսի և նրանց հակունյա՛ մտքի առօրեականությանը վերաբերող իր դատումներում, Մ. Նշանյանը նույնականացնելու ակնարկում է բանաստեղծության (իմա՞ աստվածայինի), իբրև ամտեսի, անհասանելիի և նորա հանրայնացման համար ստեղծված բավականին պարարտ հորի գոյության մասին. «Քերթուածը, ուլլաղով, եւ գրելով այդ պահը (լուսարացի, լուսեղենության, Ա.Ա.) կը պահէ ինչ որ գաղտնի է, կը պահէ ինչ որ չի տեսնուիր երբեք, ինչ որ տեսանելիութեան և գոյաւորութեան աղբիրն իսկ է: Կը պահէ զայն, որովհետեւ ամենէն վստանգուածն է նաև, միշտ անենու կորուսի ենթակայ: ...Հասկնալի<sup>5</sup> է այն ատեն թէ խօսքին այս էական «զուսեղենութիւնը» չըլլայ Վարուժանի բնազանցական «Լոյսը», որուն պիտի ձգտէր բանաստեղծը, ոչ ալ մեր գաղափարախօսութեան աւանդական փարոսը, որ տկար կամքերը պիտի շղամնէր, որ մոլոր միտքերը պիտի ուղղէր...Հասկնալի<sup>6</sup> է նաև՝ թէ Սարաֆեան իր ամբողջ կեանքի ընթացքին, յամառ վերապահութեամբ, զգուշացեր է կասկածելի «ժողովրդականացնումներէն»:

<sup>5</sup> «Գոյաստեղծ բանաստեղծ մը», «Յառաջ», 6 մայիս 1984թ., Փարիզ:

Այն հանգամանքը, որ (տեղատվություն, ասել է, թե՝ ինքնազնում, և մակրօրացություն, որ նույն է, ինչ՝ ծավալվող իրավիճակների մեջ գտնվող սեղոյալ անհատի կողմից՝ եթի որոնում), այս ամենով հանդերձ նշարելի է գիտակցականության վերագտնման «շարժում» և միևնույն ժամանակ՝ «արագություն»: Իրականությունը պետք է գգայելի դարձնելու միակ միջոցը մնում է արդեն սկսված, ընթածիրում գտնվող «ճամփորդության» շարունակումը: Եվ ամենին. «Զարմանալի չե, որ ճամփորդութիւնը դառնայ յանարծ աշխարհի ճանաչման միջոց, կարծէք արմատախլումը դառնար շրջուէր ու վերածուէր ճանաչման եղանակաւորումի... Շանաչումի ծարաւը կը փորձէ բնանկար մը ստեղծել ու պարփակել, որ դադիրի անհիմ իրերու ամբողջութիւն մը ըլլալէ, դառնայ գոյն, ձեւ, ձայն... աշխարհի ճանաչումը զուգահեռ կերպար ուրիշ ճանաչման մը հետ, տրամախոհական նշանակալից շարժումով»<sup>6</sup>:

Այս պարագային աշխարհաճանաչողությունը կարևորելի է ավելի, քանի որ ինքնաճանաչման հասած, վերջապես, երկիրովածության չափազանց տքնալից (նրա անփորձեցությունն զգացած) ընթացքը գոյության-շարունակումի ընթացքի հետ հարաբերած անհատի համար, ինքնությունն այլևս հասանելի «իրողություն» է: Ծամփորդության ավարտը ինքնաճանաչմամբ հաղթահարելի, «ավիգրն էր երկանց»:

Ծամփորդը՝ «չղջիկն է ափէ ափ» - սարաֆյանական հղումը, իրապես, ճամփորդության միայն մեկ՝ նպատակային (Հասնելիության, հանգրվանումի) երևույթի անդրադարձ չի, չսահմանափակվելով սոսկ հանգրվանային ընթացքի նկարագրականությամբ: Որքան էլ այն օժտված լինի զգայական հատու շեշտադրումներով և անհատի (գրողական) նկարագրի եքարեսիվ դիտարկումներով:

Ծամփորդը (և ճամփորդությունն իբրև հոգնոր արարողություն) ինքնօրինակ արարողակարգի ստանձնման իսկ պահից պետք է պատրաստ լինի նաև իրականության ըստ ամենայնի «յուրացման» առավել պատրաստ՝ անկանխատեսելի տեղատվությունների «դադարի» պահերին շրջուն հայացքը ընդգրկելու անցած ճանապարհի ողջ ընթացքը. քանզի ԱՏԱՆՉՆԵԼԻՆ որպես այդպիսին ՓՈԽԱՆՑԵԼԻՈՒԹՈՒՆ նախապայմանավորող անիրածեշտ գործոն է, առանց որի որևէ իրական հիմք չի տեղձվի ժառանգորդականության համար:

Ասել է, թե Սարաֆյանն այդ հիմքը տեսնում, արժենորում էր հիմնովին՝ անցյալ-ներկա («ափէ ափ») սահմանաբաժների տարածականության «գրավումով»: Այսպես է ընթացք տրվում Մեծ նավարկությանը (արդյոք հայության անցած ողջ ճանապարհը մեծ նավարկություն չէ՝ պատմական քառուիդներում գրեթե միշտ ինքնապահանման համար մղած պայքարով, ժամանակ առ ժամանակ ազգային պետականազուրկ կարգավիճակով, այս կամ այն պետության գերիշխանության տակ որպես ազգային անիրաված փոքրամասնություն գոյամաքառելով, ցեղասպանությամբ, անդառնապիրեն բնօրրան կորցնելով և ի վերջո աշխարհասփառով, որ իրականում անվերտարձ ԱՔՍՈՐ եղավ, մի ողջ ժողովորի պիտոքացումը):

<sup>6</sup> Գ.ր. Պըլտնամ, «Տրամ», էջ 375-376:

Արևմտյան քաղաքակրթության արժեքներ և նոր ժամանակների պահանջ՝ հաղորդվելու այդ արժեքներով՝ «մարդկային խոր պաշտամունք» զգալով։ Այս հանգամանքը չափազանց ընթանրացյալ է «Տեղատուութիւն և մակընթացութիւն» ժողովածուի համար։ Մակընթացմամբ «ողողված» անհատ իրականության մեջ և իր հոգևոր աշխարհում տևապես ցմցում զգալով (նաև ձերքագատվելով իր ես-ի և իրականության միջև եղած անշրջետից), արդյոք ի վիճակի է ըմբռնել իր ներքին հակասանքի արդյունք նոր գոյավիճակի բարեբերությունը։ «Ողջո՞յն ծովում, որ այս նոր վերածնումը օծեց»։ Ասել է, թե առ իրականությունն ունեցած երախտիքի արտահայտումով ինքնության անժխտականության պահանջ է զգացվում։ Ո՞րն է այդ պահանջի իսկությունը պալմանավորող հիմնորոշելին։ և ինչո՞յն հենց ճամփորդության ավարտ ենթադրող գոյավիճակային պայմաններում (երբ ենթադրվում է շարունակելի ընթացքի, իմա՝ ինքնության) դրսնորման նոր ժամանակ և ընթացք, մեկ բառով՝ ժամանակաբնեացք։

Ժամանակն, իբրև նոր պայմաններ առաջադրելու միջոց (հիմնական), ընթացք՝ իբրև վիճակի անավարտունությունը համարող անհրաժեշտություն։ «ճամփորդութիւն մը ուրեմն, կրկին դէպի ինքնութիւն»։ Իրականություն՝ իրականության մեջ։ իր աներևույթ կողմերով, չափազանց անտեսանելի, բայց կյամքի «պարտադրած» շարժմամբ, արագությամբ՝ զգայելի, որ հարանոր է, քանզի «քացուղ լայն վանդակ» կյանքի վերանումից Անտառն իմաստավորուն «գոյութենական» վիճակների ծավալուներ է ունենում կախված անհատի հոգևոր «քավկերակի» տրոփյունների ուժգնությունից։ Թե՛ ինչպիսի «պայքար» է ծավալվել Սփյուռքի և Անհատի միջև՝ հոգեբանական այլազան դրսնորմներով՝ երբեմն հովանուկ անլուծելիության համար, բարդությամբ իրավիճակներ խնդողոյն։

Համեմայն դեպք, գրական (հետևապես՝ կյանքի) փորձառական մի ժամանակաշրջան (այսպես կոչված՝ սփյուռքանալու ժամանակաշրջան) ապրած աերունդը և առանձմանպես ն։ Սարաֆյանը, չէր կարող չունենալ կրկնակ իրականության զգացում (ինչպես վերը նշեցինք՝ իրականություն-իրականության մեջ)։ Այս զգացումն ունենալը որոշապես ամխոցելիություն էր ենթադրում այն պայմաններում, որ հրահրել էր ափյուռյան գոյավիճակը։ Խակ պրանք այդ գոյավիճակի իրավ-ճշմարտացի կրողներն էին։ Ասել է, թե՝ մաքառողները...

Քաղաք և քաղաքակրթություն՝ սարաֆյանական կերպընկալումը որոնման (ազգային ինքնության գունումի) հրամայականով է պալմանավոր։ «Ահա մեղքը (Ակատի ումի հավաքականության գոյությունը՝ ոչ այնպիսին, ինչպիսին իր պատկերացումն է, Ա.Ա.) անոր որ օնած է Սփյուռքի մէջ, կրօնքին վերջալոյսին և գիտութեան արշալոյսին միջև։ Դառն ժառանգութեամբ մը... Տարբեր եմ ամէն վարկեանի։ Ի վերջոյ անձանօթ մը ես ինձի։ Ո՞վ եմ։ Ո՞ր ազգի՞ն, ո՞ր երկրի՞ն զաւակը։ Բոլոր դասնութիւններովս կը զատուիմ աշխարհին։ Բայց ցեղային ինքնութիւն մը պահելու գովելի ծառացում մը չէ ասիկա, թէեւ կը կրեմ ամիրաւուած ցեղիս ճակատագիրը։ ... Բայց ի՞նչ է իմ ուզածն, ոչ ուրիշ բան եթէ ոչ հաշտեցնել կեանքին զեղեցկութիւնը իր անհեթեռութեան հետ, զտնելու հաշտութեան եզր մը մարդոց և իմ միջեւ,

փրկել զիս մոռացումն արուեստին շնորհիւ: ... գրել ամձն՝ երբ ան կը քայլայուի, չտառապիլ մահն»<sup>7</sup>: Վիճակն ավելի է պատկերավից, ընդհանրացնող է դասնում, քանզի, «Քաղաքակրթութեան քառը պատկերն իսկ է», ըստ Սարաֆյանի, Սփյուռքին:

Այսպիսով, քաղաքակրթությունը հավաստի կովան է, որպեսզի անհատ-ճամփորդն ինքնարտահայտման առավել լայն հնարավորություններ ունենա: Ասել է, թե դրսնորի ժամանակի հրամայապահանջ որոշ իրողություններ, որոնք ոչ միայն կենսունակ են, այլև անհատ-հավաքականություն հիմնորոշելի խնդիրներում պարզուցնենք մոցնող: «Եւսիական Աերաշխարիի ու մանաւանդ սեփական անցեալին մէջ այս ուղևորութիւնը, որուն կ'ընկերանան ցան ու կասկածը, սեփական եղելոյթի տաժանքին այդ ստուերները՝ բանաստեղծի մէջ կը ստեղծէ ինքնացնան նոր հեռանկար մը, որ տեղատութեան փովի ինքնացումն կը տարբերի որոշ օրինաչափութիւններով...»<sup>8</sup>:

Որո՞նք են վերոբիշյալ «օրինաչափութիւնները», որոնց կամա-ակամա վերապահվեց այնպիսի «դեր», որ օգտանպատ պիտի լինեին տակավին արևմտյան իրականության «տենդի» մէջ գտնվող (բայց ոչ՝ տենդամիուծ) ազգային հավաքականության համար:

Պատահական չէ, որ Սարաֆյանի ստեղծաբանությանը անդրադարձող սակավաթիվ վերլուծաբանները (Գր. Պըլտյան, Հ. Քյուրքչյան) չափազանց խնդրահարուց են համարում բանաստեղծի գրողական արարքի ամենամասնահատկալից «քևեռո՛» ուղևորությունը կամ, որ նույն է՝ ճամփորդությունը: Ըստ այդմ ճամփորդի լինելիության հարաացության այնպիսի «առաջարումներ» անում, որ Սարաֆյանն իրեւ սոսկ բանաստեղծ չի ընկալվում, Աերկայացվում հրանց կողմից, այլ ինքնացնան հոգեկիճակ ապրող, դրանով իսկ հրահրող՝ առ հավաքականությունն ունեցած հոգնոր կազդուրման հրապաշտական ձգտումները, անհրաժեշտ և կարևորո՞ «Գոյաստեղծական ոլորտի անզանելիությունը» (Հ. Քյուրքչյան), որ նույն է, թե ամսեն չառնել անցյալ-ներկա հոգնոր թանձրացյալ Ակարազիրը՝ ժառագությունը, այն ավանդելի դարձնել, քանի որ.

**Մերկ ահա ես, մեզ ծնող**

**Ծովուն առջեն, կուրծքըն լայն, հովերուն դէմ... պաղ, հսկայ կանչին մէջ յարափոխ:**

**Հրճուանք: Ողջոյն իմ Աերքին հակասանքին,**

**Ողջոյն մեծ**

**Մակոնթացման ողողող:**

**Ողջոյն ծովուն, որ այս նոր**

**վերածնումս օծեց:**

<sup>7</sup> Ն. Սարաֆյան, Վէճաւէմի ամտառը, էջ 38-40:

<sup>8</sup> Ն. Սարաֆյան, Չափածո երկեր, էջ 494:

Վերստին քաղաքակրթության և անհատի լինելության (անհատի, որ ճանապարհ է անցել, վերադարձի կամ ճշմարտության գոնումի ակնկալիքով) խնդիրը ավելի առարկայական նպատակարոշ, այն է. արդյո՞ք իր «եղման կետը» (և ողջ ընթացքը, որ տարրապուծվեց ժամանակի մեջ), որ հոգևոր հեղաքենումների և տքնումի մի ողջ, ընդգրկում «ճշմարտություն» էր իր մեջ ներառում, գոհացում բերե՞ց «առաջնորդող ոգուց» ծնված անդադրում «հոգուն», որ նոյն ինքը՝ անհատն է իր խոտայլ կենսագրությամբ կամ հավաքականության ոգեկիր-վստահիալը:

Իրականության դեմ հանդիման (որ ինչ-որ տեղ նշանակում է՝ «հայութենեն հեռացումը մօտեցում է հայութեան «ոգիին») լինելու պատեմությունը՝ այլակերպումով, «վերածնումով» է պայմանավորելու անհատի փնտրությը.

Լուսին լոյսը հեղուկ՝ ճերմակ ճամբայ մը է յոի,

Ուրկէ աստղեղը կարծես

Պիտի երթամ անդարձ՝ ես...

Ա, ապագան է, բիւրե՛ որ անհուաէզ կը բըսի:

(Լուսնի լոյս)

Այս, իազ ապագայի կերպավորումն ունի, անկասկած, նաև, անդարձ, «երթալուն» է զուգահեռվում: Մի տեսակ վճռակամուխյուն է հորդում նաև ապրածից («կարօտ մը զիս կը մըղէ»): Քանի որ անհատն իր երազի անկատարության զոհն համառաբար չէր ուզում դառնալ: Ավելին, իրականությունն այդ երազով և նրա շնչառու զորությամբ պետք է առավել խորքային իմաստ ստանար, նաև իմաստնացած կյանքի ընձեռած հնարավորությանց շնորհիվ՝ (ճանաչողությամբ) անհատի հավաքականության գոյությունը: Համեմայն դեպք, երազի և իրականության սահմաններն զատորոշելու մի ճիզ է նաև անհատի, գոյապարքարի փաստը, մանավանդ, երբ «կը բարձրանար՝ հոգիս յորդ ծուխի մը պէս կայծկլտուն»:

Երա՞զս էր որ կը ցոլար,

Կը ընդարձակէր ամէն բան,

Կը կերտէր կեանքս, անոր վառ

Խորք մը տալով անսահման,

Թէ՞ կեանքս էր որ միշտ կու տար

Զայմ՝ ծոցն ի վեր իր խորին,

Զերթ յայտնութիւնն անկատար

Իր ապագայ պատկերին:

(Երազ և կեանք)

Ծարունակաբար Ակատեղի է երկվություն ապրողի կամ երկվություն-երկփեղկ-վածությունն իբրև հոգեվիճակ «կրողի» (Սփյուռքն իբրև ժամանակ ապրողի) «պահ-վածքի» անհավասարակշուրջյունը: Կարծես մի տեսակ ոչ ավարտում վիճակի

«պարտադրանքով»՝ անհատի վեմբռուսությունը երբեմն-երբեմն իրեն զգացնել է տալիս: Բայց ոչ այն ուժգնությամբ, որ հոգեվիճակի «անպարտությունը» տևապես տրեն շարունակվի: Այն, ինչ չափազանց վնասաբեր ներգործություն կունենա իր ընթացքն ինքնավերահսկող անհատի համար: Որքան էլ.

Ծամբորդն եմ ես,  
Սուտի, ճիզի, տառապանքի օրէ մը վերջ

(Մեկնում)

Այնուհանդերձ.

Օ՛, մեր կեանքը արկածալից:

Դարերն՝ հոսող աղբիւրներ՝ լայն, յորդառատ կը հոսին:

(Լուսարձակներ)

Այսափ կարևորության ընծայումը իրականության արկածախնդրական-հեղինուկ մկարագրին, մասնավորեղով՝ քաղաքի ժխորն ու «ողբերգու թոշումներու», «փողոցներէն լոյս սփոռող գիմիներու» քառասալից խրախնանքի մկարագիրը՝ համրայտ «ընդվզումով». «Վը բարախէ սփրտուս ու կ'որոտայ անհունութիւն մը ներքին...». ոչ միայն դժվար է երևակայել, այլև «անորսալի»՝ իրականության մնչընդմեջ «անցումները», նրա տևողականությունը, ոիթիմը. «Վը գյորի պարապութիւնը հիմա»: Ավելին՝ անշրջանցելի է ժամանակ-իրականություն (իբրև միախառն հոգեվիճակի դրսուրում), նաև երբեմն հակադրայից «փրողությունների» ողջ ընթացքը, բայց «արձանագրելի» ուրուսն անհատականություն ու գոյակերպ արդեն իսկ դրսորած անհատի կողմից: Չափազանց զգայալից անհատի, որ «դարերով սպասուած երազի» սարսուուի (բայց ոչ համակերպ, այլ պոռթկուն) կրողն է:

Կը դողդամ ամէն անզամ՝ որ կանցնիս վրայէս,  
Վայրագ ու թովիչ թոչում...:

(Սաւառնակ)

«Հոգիս վայրագ՝ կը խմէ անյագօրէն՝ հոսանուտ տարածութիւնը»՝ խոստովանումն ամենաին ժամանակամերժ պահվածքի արտահայտություն չէ, ոչ էլ ժամանակի «թելադրութեամբ» անհատի հոգեխեղման նշանակալիության դրսորման ապացուց: Բառն ընդգծյալ իմաստ է ստանում, քանի որ երբեմնի «մարդատեաց հոգին» է, որ տակավին տարածության մեջ, «անհունութիւն մը ներքին» ունենալու կարուտանքն ապրելով, անհաղորդ է իրականության պերախումներին կամ գոնե անտես է առնում, անմասնակից է դառնում քառսի և «գյորուող պարապութեան» քմայքներին՝ ինքնության դիմադրածումների ուժականությամբ կամ որ, ինչպես մեկ այլ պարագայի Հ. Օշականը է իրավացիորեն նկատում. «մեծ քաղաքակրթութեան միջավանքը մերինին վրայ»: Հետևապես, քաղաքակրթության և քառսի նովականացումն ինչ-ինչ առումներով վերստին խնդրականացնում է ինքության ճանապարհի իսկությունը, քանի որ.

Մենք հասմինք հոն, ուր յոյսեր մեր անձն ամբողջ կը զբտեն,

Կը փրուեն լոյս մը հեռուս:

(Թաճճուինք, Սէր, մեր սիրոյն)

Եվ քանի որ «քաղաքներուն և հողերուն վըրայէն» անցման պահը աշխարհի (հատկապես՝ արևմտյան) ճանաչում է ենթադրում «փառուսութէ մը վեր», ապա.

Քաղաքն օտար՝ Էլեկտրական ակուաներով,

Հինգ յարկ վարէն բացուած երախ՝

Ցառորաքեր, զիս վար քաշող խորխորատ:

(Տեսիլք)

Իրական «տեսիլքի» ընկալումը զուտ աշխարհաճանաչողական նշանակություն ունենալուց զատ, նաև պայքար է՝ փնտրութիւն ընթացքում գտածը (ճանապարհը) ամենորուստ պահելու համար. «չար ու բարի ոգիներ օրրանիս շուրջ, սրտիս համար կոռւեցան»: Համենայն դեպս, դժվարին մի հաճամանք՝ վերատին եվրոպական քաղաքակրթության բարդահարուց իրականության հետևանք:

Որքան է հոգին ազատ, անկաշկանդ լինի, այնուամենայմիվ, իրականության ԿԱՊԱՆՔՈՒՄԻՆ իճ-որ տեղ, կամա ակամա, ենթակա է, քանզի ԵՆԹԱԿԱՅԻ (անհատի) փոխարարերության մեջ գտնվելու վիճակն արդեն (իրականության հետ) ենթադրում է հարաբերությունների կազմավորում, ըստ այդմ, անհատի մերաշխարհի կազմակերպություն տեղի տալով «օտար թափանցում»-մերի առաջ: Այսուամենայմիվ, ըստ չրաքյանական բանականության, ամեն անհատ. «ամեն հոգի՝ տաճարի մը կանգնումին համար կանխորշուուծ խորհրդածուի ամայութիւններ ուներ... մենասէր որ կը յառի, կը զննէ, կը խիի, ու կը թուի մեղմել, արգիլե շամալ որեւէ օտար թափանցում, վասնզի ալ ներսը անմեղութիւն չկայ, ու մանաւանդ կարծես մերժել արտաշխարհի նողկութեանց տեսարանին ազատ մուտքը՝ պապքինելու կարու հոգուն մէջ, որովհետև անոնցմով չարատաւորելու՝ ուրեմն անոնց ներելու չափ վճիտ չէ անհկա...»<sup>9</sup>:

Հարկ կա՞ մասնորոշել, ընդգծելի դարձնել, որ առ արտաշխարհն ունեցած վերապահ Ժխտականությունն ամենակին արդյունք չէ հոգու, մուտքումի նեղմության, մանավանդ Խնդրայի պարագային, որ իմացականության «խորհրդար մըն է անմեկնելի»: Խնդրահարուցը, ինչպես Ն. Սարաֆյանը գրում է «Վահան Թեքեան» հոդվածում. «Բայսում արտաքին աշխարհին հետ: Հոգեկան առանձնութիւն: Ներքին ինքնանամաշում: Ներքին հակասութիւններ: Ներքին և մշտական հալածանք»<sup>10</sup>:

Վերոբերյալ հատկածը Վ. Թեքեյանի ստեղծագործությանը բնորոշ լինելուց զատ, նաև հոգեմակերպաց վիճակներ ապրած անհատի, արտաքին «երևոյթներուն».

<sup>9</sup> Խնդրա (Ժիրան Չրաբեան) «Ներաշխարհ», Կ. Պոլիս, 1906 թ., էջ 106:

<sup>10</sup> Ն. Սարաֆյան, Երկեր, էջ 159:

նետած հայացքի դրսորանք է. ըստ այդմ ԱՌԱՆՁՆՈՒԹՅՈՒՆ ապրած, ինք-ՆԱԾԱՆԱՉՄԱՆ հասած անհատի՝ հավաքական ըմբռնում:

Եվ եթե իրականության համար սահմանելի ՔԱՌՍԻ վիճակը վերոբերյալ Ակա-տառմամբ՝ «ստեղծարար» է, ապա. «Մարտուն մէջ կեանքն է գալիք, որ կը սիրեմ հիմա ես», սարաֆյանական հիունը ընդհանրական է ոչ միայն այս քննարկվող շրջանի ստեղծագործության համար:

Արդյո՞ք մտածումի տարրության այլ շերտեր չի ենթադրվում, մանավանդ, երբ ապրումի շիկացող մթնոլորտն է միշտ առկա՝ ընդմեջ, արդեն քանից Աշված ան-հատի և իրականության, երբ ճամփորդությունը արարողություն է՝ անցյալից ներկա «հոսող»: Եվ այս ընթացքում կյանքի հեղաբեկումներն իր հոգու մեջ ներառելով (վերածնում, վերազարթնում պայմանավորող հոգու), առավել «սէր եւ ամիուն երա-նութիւն» և զգաստացումի գիտակցում է հաղորդում մահվան (հարության) զաղա-փարը վերահմաստավորողին.

Կը շքենայ ամէն զիշեր, սեւ մայթին վրայ, ջուրն անձրեւին,

Երբ լապտերին լոյսն իր վըրայ թիստսի պէս կը տարածուի:

Աստղեր, բոցեր կ'արտացողան, կը թրթուն արծաթ թելեր:

Անդրաշխարի մը անդորր ու պերծ կը ծաւալի իր ծոցն ի վեր:

Եթէ լըք քեզ կեանքն այրպէս, որով, օ՛, մահ, կ'աղուորնաս դու.

Իմ պատիս տակ, թաքնաթաքուր, օ՛ իմ տրտում ողբերգութիւն:

(Կախարդական հայելի)

Քրիստոսի գոյ-զաղափարի խնդրի անդրադարձը չէ՝ մահվան գոյավիճակի զու-գահեռումով, այլ ԱՍՏԾՈ Որդու ստեղծարարության (իբրև նախանձիշ՝ կյանքի սկզբնավորումի), կյանքն անաղարտ սկսելու և այն պահպանելու հենց այլափին, որ ի վերջո սկիզբն ու վերջն ընդհանրանան. այսպիսի ընթացքն իսկ արդեն կատա-րելության միտում և եղանակավորում ունի:

Սարաֆյանի կողմից ճշմարտության որոնման խնդիրը այնքան ու այնպէս էր անհրաժեշտվում, դառնում գիտակցության առաջմղիչ կենսունակ գործոն, որ «պրության ձգտողի» երկյուղանքով, նա իրականությունը դիտում էր որպէս «մա-նակից» անհատի «հոգևոր մաքրումի»՝ բարոյականի ըմբռնումի խնդիրների խամա-պատկերում: Բայց այն, իմ արարչական է ու նախասահմանյալ, բնավ ներակա չէ քննման, արտաքին թեղադրական ըմբռնումների խորապատկերի վրա. «Քրիստո-Աւութիւնը, որ աշխարհական վաղանցիկ, պատրավիր գոտած է, ձգտած է նաև բա-ցատրել բանականութեան սխալ ըլլալը: Սխալական է եւ անբա՛ բացատրելու հա-մար արարիչն ու անոր ստեղծագործութիւնը: Այն, որ կ'ուզէ Աստուծոյ հասմիլ, պէտք է որ չնշէ իր գիտակցութիւնը: Աստուծոյ հասնելէ վերջ, կ'ունենայ մերժին լոյս մը, այլ գիտակցութիւն մը՝ որով կը տեսնէ բոլոր ճշմարտութիւնները»<sup>11</sup>:

<sup>11</sup> Ն. Սարաֆյան, Վէճսէմի անտառը, էջ 246: